

Հավելված N 1  
 Հայաստանի Հանրապետության  
 կառավարությանն առընթեր պետական  
 եկամուտների կոմիտեի նախագահի  
 2018 թվականի փետրվարի 13-ի  
 N 59-Ն հրամանի

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
 Գործադիր մարմնի կողմից  
 «14» մայիս 2018 թ.

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն**

«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության 2017թ. գործունեության մասին

<b>1. Հասարակական կազմակերպության՝</b>	
1.1 Լրիվ անվանումը	«Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն
1.2 ՀՎՀՀ	01212788
1.3 Գտնվելու վայրը	Կորյունի19ա
1.4 Պետական գրանցման համարը	211.171.01966
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	14.02.1997թ
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	010589186; 077056405; 091405219
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.bridgeofhope.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@bridgeofhope.am
<b>2. Հասարակական կազմակերպության՝</b>	
2.1 Անդամների թիվը	113
2.2 Միջոցներից օգտված անդամների թիվը	0
2.3 Կամավորների թիվը	0
2.4 Միջոցներից օգտված կամավորների թիվը	0

3. Իրականացված ծրագրեր՝		
3.1 Ծրագրի անվանումը և վայրը	3.2 Ծախսված գումարը	3.3 Կարգավիճակը
«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգաձության ծառայություններ»: ՀՀ Տավուշի մարզ:	74.667.300	Ավարտված
«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ»: ՀՀ Տավուշի մարզ:	29.154.900	Ավարտված
«Տավուշի մարզում համայնքների դիմակայունության բարելավում»: ՀՀ Տավուշի մարզ:	15.512.551	Ավարտված
«Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում»: ՀՀ Սյունիքի և Լոռու մարզեր:	90.035.500	Ավարտված
«Ապրել միասին, սովորել միասին»: Երևան	70.152.500	Չավարտված
«Նախադպրոցական հաստատություններում ներառական կրթական միջավայրի խթանում»: Երևան	13.353.455	Չավարտված
«Իմ մասին»: Երևան, ՀՀ Տավուշի մարզ:	16.869.050	Չավարտված
«Կովկասյան ցանց հանուն երեխաների»: Երևան, ՀՀ Տավուշի մարզ:	10.080.016	Ավարտված
«Արևային էներգիայի օգտագործումն ի նպաստ էներգետիկ անկախությանը և անտառների պահպանմանը Տավուշի մարզում»: Իջևան:	0	Չավարտված
«Առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող շահառուի	546.172	Ավարտված

գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերում»: Դիվիզան:			
«Առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող շահառուի գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերում»: Իջևան:	752.531	Ավարտված	
«Առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող շահառուի գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերում»: Բերդ:	467.418	Ավարտված	
«Աջակցություն Հույսի կամուրջ ՀԿ-ի Դիվիզանի մասնաճյուղին»: Դիվիզան:	80.000	Ավարտված	
«Աջակցություն Հույսի կամուրջ ՀԿ-ի Նոյեմբերյանի մասնաճյուղին»: Նոյեմբերյան:	125.000	Չավարտված	
<b>4. Տարեկան մուտքեր և ստացման աղբյուրներ՝</b>			
4.1 Դրամական միջոցները	4.2 Գույքը		4.3 Ստացման աղբյուրները
	4.2.1 Տեսակը	4.2.2 Արժեքը	
74.667.300			ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
29.154.900			ՀՀ կրթության և գիտության նախարարություն
15.512.551			«ՕՔՍԵՋԵՆ երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ»:
90.035.500			ԱՄՆ ՄՁԳ (USAID) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF)
79.441.900			«Առաքելություն Արևելք» դանիական մարդասիրական կազմակերպություն
16.969.505			Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան
29.051.150			«Միջմշակութային կենտրոն» ավստրիական ոչ կառավարական կազմակերպություն (IZ):
10.080.016			«Միջմշակութային կենտրոն» ավստրիական ոչ կառավարական կազմակերպություն (IZ):
16.949.800			ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

		(UNDP):
546.172		ՀՀ ԱՍՀՆ-ի աշխատակազմի գրադավաճության պետական գործակալության Դիլիջանի գրադավաճության տարածքային կենտրոն:
752.531		ՀՀ ԱՍՀՆ-ի աշխատակազմի գրադավաճության պետական գործակալության Իջևանի գրադավաճության տարածքային կենտրոն
467.418		ՀՀ ԱՍՀՆ-ի աշխատակազմի գրադավաճության պետական գործակալության Բերդի գրադավաճության տարածքային կենտրոն
80.000		Դիլիջանի համայնքապետարան
300.000		Նոյեմբերյանի համայնքապետարան

**5. Օգտագործված միջոցներ՝**

5.1 Դրամական միջոցները	5.2 Գույքը	
	5.2.1 Տեսակը	5.2.2 Արժեքը
0	0	0
6. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	321.796.393	
7. Նիստերի քանակը		
7.1 Ժողովի	7.2 Կոլեգիալ կառավարման այլ մարմինների	
1	6	

Կից ներկայացվում է՝

1) աուդիտորի եզրակացությունը՝ \_\_\_\_\_ 3 \_\_\_\_\_ թերթից,  
թերթերի քանակը

2) վերստուգող մարմնի եզրակացությունը՝ \_\_\_\_\_ 0 \_\_\_\_\_ թերթից:  
թերթերի քանակը՝ 0

Գործադիր մարմնի ղեկավար ստորագրությունը, անունը, ազգանունը \_\_\_\_\_ Թադևոսյան

Գլխավոր հաշվապահ ստորագրությունը, անունը, ազգանունը \_\_\_\_\_ Գևորգյան





«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՉ ՍՊԸ  
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1  
“London Business Group” JV LLC  
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA  
Tel: (+37410) 541272, 560852  
E-mail: audit@lbg.am  
Web: www.lbg.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հուլիսի Կամուրջ» Հաշմանդամություն Ունեցող Երեխաների և Երիտասարդների Իրավունքների Պաշտպանության հասարակական կազմակերպության ղեկավարությանը և անդամներին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հուլիսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կից ֆինանսական հաշվետվությունները՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով առ 31 դեկտեմբերի 2017թ.:

Մեր կարծիքով, Կազմակերպության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հանրային միջոցներից ֆինանսավորման մասով, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2017 թ-ի հունվարի 1-ից մինչև 2017 թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Կազմակերպության մուտքերը և օգտագործված միջոցները՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

#### Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, որք այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զերծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, դրոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՉ ՍՊԸ

14 մայիսի, 2018 թ.

Աուդիտի ղեկավար  
Մարիամ Խոջայան



Տնօրեն  
Տիգրան Զորյան

